

Մ. ԱՍԱՅԱՆ, Ցեղակրոն և տարնական շարժումները սփյուռում 20-րդ դարի 30-ական թվականներին, ԾՊՀ հրատարակչություն, Երևան, 1997, 144 էջ:

Հայ ժողովրդի պատմության և հայ ազգային գործիչների գործունեության ուսումնասիրության բնագավառում ցավալիորեն դեռևս կան սպիտակ էջեր և թերացումներ, հաճախ նաև՝ խեղաթյուրումներ: Այս առումով բացառություն չէ սփյուռքահայության պատմությունը: Այդ բացթողումները, հատկապես նորագույն շրջանի վերաբերյալ, հիմնականում պայմանավորված էին ժամանակի իրավա-քաղաքական համակարգի տիրող մթնոլորտով:

Վերջին տարիների ազգային համատարած զարթոնքը մեծապես նպաստեց նախորդ շրջանի շատ թերությունների մերժմանը և նորովի մեկնաբանմանը: Մյուս կողմից, դրական տեղաշարժերի ապացույցներից է, որ ներկա փուլում քիչ ուսումնասիրողներ չկան, որոնք զերծ մնալով շարունակ թեմաների անհարկի կրկնությունից՝ ձեռնամուխ են լինում նվազ կամ ընդհանրապես շուտումնասիրված խնդիրների բացահայտմանը և հավուր պատշաճի գիտական ներկայացմանը:

Նմանատիպ բացառություններից է Մ. Հալալյանի «Ցեղակրոն և տարնական շարժումները սփյուռքում 20-րդ դարի 30-ական թվականներին» աշխատությունը:

Սփյուռքահայության նորագույն շրջանի պատմության ուսումնասիրությունը ընդհանուր առմամբ համեմատաբար բարձր վիճակում է, սակայն հիմնական ուշադրությունը դարձվել է 20-րդ դարի երկրորդ կեսի սփյուռքահայ գաղթօջախների մշակութային և սոցիալ-քաղաքական հարցերին: Այնուամենայնիվ, մինչ այժմ բազմաթիվ հարցերի վրա քաղաքական դրդապատճառներով արգելիքներ էին դրված և դժբախտաբար մասնագետների ուշադրությունից դուրս էին մնացել: Այս պարագան առավելապես վերաբերում է ցեղակրոն և տարնական շարժումներին: Խորհրդահայ պատմագիտությունը առավելապես զբաղվել է կոմունիստական և հեղափոխական շարժումների և գաղափարախոսությունների պատմությամբ:

Ցեղակրոն և տարնական շարժումները հանիրավի մոռացության էին մատնվել, որը պայմանավորված էր նախ և առաջ դրանց հիմնադիր անձանց հետ, որոնց հակախորհրդային գործիչների պիտակ էր կպցված:

Ավելորդ չենք համարում պատճառների շարքում նշել նաև, որ այդ շարժումները իրենց

գաղափարախոսություններով շատ հաճախ միտումնավոր հավասարեցվում էին նացիզմի և ֆաշիզմի հետ: Փաստորեն, երբ ամեն մի ազգային ներկայացվում էր որպես բացասական իմաստ ունեցող ազգայնամոլություն, այդ շարժումների օբյեկտիվ և գիտական ուսումնասիրության մասին խոսք չէր կարող լինել:

Հեղինակը այս թեմայի ուսումնասիրության գործում սկսնակ չէ: Նա այդ շարժումների և դրանց ղեկավարների գործունեության և գաղափարախոսության մասին վերջին տարիներից հրատարակել է մի քանի ուսումնասիրություններ, ինչպես նաև բազմիցս հանդես եկել պարբերական մամուլում: Մ. Հալալյանի աշխատասիրությամբ հրատարակվել են նաև Գ. Նժդեհի և Լ. Ասատրյանի հոդվածների ժողովածուները:

Մինչ այժմ հայ ընթերցողի՝ այն էլ շատ սահմանափակ մի հատվածի, տրամադրության ներքո էին միայն Վ. Գևորգյանի, Ա. Բարսեղյանի և Ավոյի աշխատությունները: Այս խրեդրին հանրամատչելի անդրադարձել է Վ. Առաքելյանը, իսկ Ռ. Խորշուդյանը հրատարակել է Գ. Նժդեհի անտիպ գրառումները:

Մ. Հալալյանը օգտվել է թեմային առնչվող ողջ գրականությունից և պարբերական մամուլից: Նա փաստորեն շրջանառության մեջ է դրել շատ հարուստ սկզբնաղբյուրային տեղեկություններ: Այդ տեսակետից հիշատակության արժանի է այն փաստը, որ հեղինակը մեծապես օգտվել է Ազգային անվտանգության նախարարության արխիվում պահպանվող Գ. Նժդեհի անձնական գործի չափազանց հարուստ նյութից: Բնականաբար հեղինակի ուշադրության կենտրոնում են եղել Գ. Նժդեհի և Լ. Ասատրյանի երկասիրությունները:

1 Մ. Հալալյան, Ցեղակրոնություն, Ե., 1994, Տարնականություն, Ե., 1994:

2 «Գարեգին Նժդեհ», Ե., 1995, Լ. Ասատրյան, Հոդվածների ժողովածու, Ե., 1995:

3 Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, Պուրբէշ, 1923, Ա. Բարսեղյան, Ցեղակրոն շարժում, Բոստոն, 1935: Աս, Նժդեհ, Բէյրութ, 1968:

4 Վ. Առաքելյան, Նժդեհ, Ե., 1989: Նժդեհ, Բանտային գրառումներ, հրատարակեց Ռ. Խորշուդյանը, Ե., 1993:

5 Գ. Նժդեհ, էջեր իմ օրագրից, Գահիրե, 1956

Կառուցվածքային առումով աշխատությունը հիմնավորված է համակարգված ձևով բաժանված է հինգ գլուխների:

Առաջին գլուխը վերաբերում է սփյուռքում 20-րդ դարի 30-ական թվականներին ծավալված հայ ազգայնական շարժումների պատմությանը (էջ 7—22): Այդ շարժումները, որպես կանոն, սկիզբ էին առնում ՀՅԴ ներսում կամ սերում նրանից:

Ցեղային-վերանորոգչական շարժումը, փաստորեն, իր մեջ պարունակում էր այն բոլոր սաղմերը, որոնք հետագայում կատարելագործվեցին ցեղակրոն շարժման կողմից: Ցեղային-վերանորոգչական շարժման հայեցակետերը հիմնականում արտահայտվեցին Գ. Նժդեհի և Լ. Ասատրյանի կողմից «Ռուսներ» և «Ցեղ և հայրենիք» հանդեսներում, որոնք կարճատև կյանք ունեցան: Վերջինիս, ի միջիայլոց, աշխատակցում էր հայտնի տեսնագետ Վ. Տոտոյանը: Ցեղային-վերանորոգչական շարժումը իր գործունեությունը հիմնականում ծավալեց Բուլղարիայում:

1932 թ. սեպտեմբերին Ֆրանսիայում սկզբընվորվեց Մարտկոցական շարժումը, որի գաղափարախոսական ղեկավարներից էր Վ. Շուշանյանը: Այս շարժմանը համակարանրով էին վերաբերվում Ե. Նաթալին և Զորավար Սմբատը: Երբժան պաշտոնաթերթը «Մարտկոց» թերթն էր, որին ժամանակին թղթակցել է նաև Կ. Պալճյանը (Վազգեն Ա): 1933 թ. հոկտեմբերին Մարտկոցական շարժումը ձևափոխվեց «Արևմտահայ ազատագրական ուխտի» «Ամբողջ» պաշտոնաթերթով: Գաղափարական տեսակետից էական տարբերություններ չկային նրանց միջև, երկրորդը ուղղակի ավելի կազմակերպված տեսք ուներ:

Հայ պատմագիտության մեջ առաջին անգամ հրատարակվում է «Արևմտահայ ազատագրական ուխտի» դավանանքը և քայլերգը (էջ 17—19): 1935 թ. մայիսին Փարիզում հիմնվեց Հայ ազգայնական կազմակերպությունը՝ Վ. Շանթի խմբագրած «Ազգ» պաշտոնաթերթով: Այս կազմակերպությունը համադաշնակցային կովկասի ստեղծման կողմնակից էր:

Գրքի երկրորդ գլուխը վերաբերում է ցեղակրոն շարժման գաղափարախոսությանը և պատմությանը (էջ 23—51):

Ցեղակրոն շարժումը կազմակերպչորեն սկիզբ առավ 1933 թ. ամռանը ԱՄՆ-ում, Գ. Նժդեհի

նախաձեռնությամբ: Երբժան կորիզը Ցեղակրոն ուխտերն էին: Հեղինակը համակողմանի ներկայացնում է շարժման ստեղծման դրդապատճառները և կազմակերպչական կառուցվածքը: Մ. Լալայանը իրավացիորեն նշում է, որ ցեղակրոնությունը գաղափարական դատարկության վրա չէր ստեղծվում: Որպես նախորդներ նա նշում է Գ. Ալիշանի, ԲաֆՖու, Գ. Վարուժանի և Ա. Ահարոնյանի անունները, որոնք տրվել են գաղափարներ, բայց ոչ գաղափարախոսություն: Միայն Գ. Նժդեհը, ամփոփելով այդ ամենը, հանրագումարի բերեց և ձևավորված կուռ համակարգի տեսքով ներկայացրեց ցեղակրոնությունը՝ որպես Հայոց աշխարհայացք:

Մ. Լալայանը հանգամանալից ներկայացնում է ցեղակրոնության հիմնական սկզբունքները, պատկերացումները և հասկացությունները: Քննելով ցեղակրոնության և նացիզմի ու ֆաշիզմի գաղափարական հարաբերակցության հարցը՝ հեղինակը ցույց է տալիս դրանց ակնհայտ սկզբունքային տարբերությունները: Այս առումով նա ցեղակրոնությունը իրավամբ համարում է առողջ ազգայնականություն, որը ոչ մի կապ չունի նացիզմի և ֆաշիզմի հետ:

Հետաքրքիր են Գ. Նժդեհի և Ֆ. Նիցշեի հայացքների իմաստասիրական փոխազդեցությունը հարցի վերլուծական քննարկումները:

Հիմա՝ էլ արդիական են հնչում ցեղակրոնության պատկերացումները կրոնի և հայ եկեղեցու վերաբերյալ: Հարկավոր է շեշտել, որ ցեղակրոնությունը բացառապես աշխարհիկ ասմունք է: Այս կապակցությամբ ավելորդ չէ նշել, որ կրոն բառի արմատը սկիզբն է՝ Գ. Նժդեհը հակաքրիստոնյա չէ, ոչ էլ հին հավատքին վերադառնալու կոչ է անում: Նա ուղղակի եկեղեցու ազգայնացման և գաղափարական վերագնահատման կողմնակից է: Գ. Նժդեհի խորին համոզվածամբ հայ եկեղեցու նոր հավատամքը պետք է լինի հայ ժողովրդի ինքնապատկանությունը:

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է տարոնական շարժման գաղափարախոսությանը և պատմությանը (էջ 52—72):

Տարոնական շարժման հենարանը 1917 թ. հիմնված Տարոն—Տուրուբերան հայրենակցական միությունն էր, որը Լ. Ասատրյանի խմբագրությամբ 1938 թ. սկսեց հրատարակել «Տարոնի Արծիվ» ամսաթերթը:

Հեղինակը մանրամասն անդրադառնում է շարժման նախադրյալներին և հետապնդած նրա պատկերներին: Երազելով տարոնականության էությունը՝ Մ. Լալայանը ևս որպես նրա աշխարհայացքային հիմք ընդունում է ցեղը և հայրենիքը: Առանձնապես հետաքրքիր են տարոնականության պատմական ակունքների պարզաբանումը և տարոնական հայր բախտորոշ գրծերի բնորոշումը: Անհրաժեշտ է նշել, որ մյուս

1924, Որդիների պայքարը հայրերի դեմ, Սալոնիկ, 1927, Բաց նամակներ հայ մտավորականության, Բոստոն, 1929, Ցեղի ոգու շարժը, Սոֆիա, 1932, Ամերիկահայությունը-ցեղը և իր տակալը, Սոֆիա, 1935, Իմ պատասխանը, Սոֆիա, 1937: Լ. Ասատրյան, Մտածումներ հայկական ճգնաժամի, հայ հեղափոխության և մայիսի 28-ի մասին, Սոֆիա, 1933, Ցեղանենգ շեյթանը, Սոֆիա, 1933, Հայաստան-արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, Սոֆիա, 1942:

6 Լ. Անառյան, Հայրենի արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 685:

կողմից տարոնական շարժումը իր առջև նպատակ չէր դրել հիմնավորել Տարոնի գերակայությունը:

Գրքի շորրորդ գլուխը վերաբերում է ցեղակրոն և տարոնական շարժումների հիմնադիր-գաղափարախոսներ Գ. Նժդեհի և Հ. Ասատրյանի գործունեությանը (էջ 73—94): Օգտագործելով հայտնի և հատկապես մինչ այժմ անհայտ բազմաթիվ աղբյուրներ՝ Մ. Հալալյանը վերստեղծում է Գ. Նժդեհ—Հ. Ասատրյան ցեղաշունչ երկյակի պայքարի վերածված կյանքի նորովի, ճշմարտացի պատկերը՝ հիրավի ըստ արժանվույն գնահատելով նրանց հայրենանվեր գործունեությունը:

Աշխատության վերջին՝ հինգերորդ գլխում (էջ 95—104), հիմնավորելով ցեղակրոնության և տարոնականության համադրելիությունը, Մ. Հալալյանը ըստ դրանց ներկայացնում է ազգային գաղափարախոսության դրույթները: Ընդհանրացնելով՝ հեղինակը ցեղակրոնությունը և տարոնականությունը իրավացիորեն համարում է հայ ազգային գաղափարախոսության առանցքը:

Գրքին որպես հավելված արտատպված է Գ. Նժդեհի «Ցեղակրոնության հավատամքը», որը նրա ցեղաշունչ երկասիրությունների գոհարներից է:

Թեղակրոնությունը և տարոնականությունը ա-

մենևին էլ քարացած ուսմունքներ չեն: Ի պատիվ հեղինակի, շնայած կատարած զգալի աշխատանքին, նա ինքն էլ ընդունում է, որ այս շարժումների ուսումնասիրությունը սրանով չի սահմանափակվում:

Այսպիսով, Մ. Հալալյանի կողմից կատարված է իսկապես շնորհակալ աշխատանք: Հայ պատմագիտության մեջ առաջին անգամ հնարավորության սահմաններում օգտագործելով առկա փաստացի նյութը՝ ընթերցողի ուշադրության է հանձնվել սփյուռքում 30-ական թվականներին ծավալված, սակայն մինչ այժմ մոռացության մատնված ազգայնական շարժումների համապարփակ գաղափարախոսությունը և պատմությունը:

Այս առումով եթե կան առանձին ոչ էական թերություններ, ապա դրանք բնավ չեն նսեմացնում և ստվեր գցում աշխատության բազմաթիվ արժանիքների վրա:

Ցեղակրոն և տարոնական շարժումները, ինչպես նաև Գ. Նժդեհի ու Հ. Ասատրյանի գործունեությունը, անհրաժեշտաբար պետք է զբոսնորվեն ոչ միայն պատմաբանների, այլև փիլիսոփաների և լեզվաբանների ուշադրության կենտրոնում՝ մանավանդ հաշվի առնելով դրանց հրատապ և արդիական հնչողությունը:

Ա. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ